ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնումների գնահատող հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 16-ի N02/16.02.22 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման դրույթների կիրառմամբ

Գնանշման հարցման ծածկագիրը՝ **ՀՋ-ԳՀ- ԿՍ-02/16.02.22**

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **20 տոննա Կաուստիկ սոդա (տեխնիկական կծու նատրիում ГОСТ 2263-79, հեղուկ վիճակում) 100% կոնցենտրացիայի հաշվարկով,** մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Գնման առարկայի բնութագիրը՝

Տեխնիկական կծու նատրիումը NaOH օգտագործվում է անիոնիտային I, II աստիճանի զտիչների և ԽՏՋ տիպի զտիչների ռեգեներացիայի համար: Կծու նատրիումը պետք է համապատասխանի ГОСТ 2263-79 տեխնիկական պահանջներին: Անգույն հեղուկ է, թույլատրելի 42-46%-ը:

Կծու նատրիումը NaOH 2-րդ կարգի վտանգավորության աստիճանի է:

Մատակարարումը պետք է կատարվի մինչև «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի տարածք մատակարարի ուժերով և միջոցներով պահպանելով տեղափոխման ու պահպանման պայմանները: Մատակարարման ժամկետ է սահմանվում **մեկ ամիս՝ Պայմանագիրը կնքելու օրվանից:**

Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո, տվյալ քիմիական նյութը ձեռքբերելու, պահելու, փոխադրելու համար թույլտվության պետական գրանցման փաստաթուղթ ներկայացնելու պայմանով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԷԿ»ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով կամ Էլ. փոստ info@raztes.am:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԷԿ» ԲԲԸ ք.Հրազդան, Գործարանային 1 հասցեում, 2022թ. փետևվաևի 23-ին ժամը 11^{00}-ին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Է. Սանամյանին, հեռախոս՝ +374 93 404505, կամ քիմիական արտադրամասի պետ տիկին Փերիխանյանին, բջջ.հեռ (094) 20-22-18:

Պատվիրատու՝ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ